ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «11» 06 2018թ № 404-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասով և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝

հրամայում եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման
և ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 11-ի
N 404 -Լ հրամանի

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակա մարմին է:

2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Կոմիտեն գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտե.

2) ռուսերեն՝ Комитет по туризму министерства экономического развития и инвестиций Республики Армения.

3) անգլերեն՝ Tourism Committee of the Ministry of Economic Development and Investments of the Republic of Armenia.

4. ֆրանսերեն՝ Comité du tourisme du Ministère du développement économique et des investissements de la République d'Arménie

5. Կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր: Կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Կոմիտեն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Կոմիտեի համապատասխան գնման ընթացակարգերը և գնման պայմանագրերի կնքումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կոմիտեն կազմված է նախագահից, նախագահի տեղակալից, նախագահի օգնականներից, կառուցվածքային ստորաբաժանումներից, գլխավոր քարտուղարից:

8. Կոմիտեի ենթակայությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են գործել պետական ոչ առևտրային կազմակերպություններ և հիմնարկներ:

9. Կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

10. Կոմիտեի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Միհեր Մկրտչյան 5:

## II. ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Կոմիտեի նպատակն է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակումն ու իրականացման ապահովումը:

12. Կոմիտեի խնդիրներն են՝

1) համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ամրապնդումն ու շարունակական բարձրացումը.

2) Հայաստանում նոր զբոսաշրջային գրավչությունների բացահայտումը, մրցունակ և այլընտրանքային զբոսաշրջային արդյունքների ձևավորումը, հայկական զբոսաշրջային արդյունքի բազմազանեցումը.

3) ծառայությունների որակի ապահովումն ու շարունակական բարձրացումը, մարդկային ռեսուրսների զարգացումը.

4) ամբողջական վիճակագրության, որակյալ հետազոտությունների, ուսումնասիրությունների և վերլուծությունների ապահովումը.

5) իր իրավասության շրջանակում զբոսաշրջային ենթակառուցվածքների ձևավորման, բարելավման և զարգացման ապահովումը.

6) ոլորտի կազմակերպությունների, դրանց միությունների ու հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը.

7) զբոսաշրջության ոլորտի նկատմամբ հանրային հետաքրքրության և շահագրգռվածության խթանումը, շահագրգիռ կողմերի միջև ընդհանուր տեսլականի ու արդյունավետ համագործակցության ապահովումը.

8) զբոսաշրջության բնագավառում գործող՝ մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանն աջակցությունը.

9) բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ապահովումը, զբոսաշրջային կենտրոնների և գրավչության վայրերի կառավարման բարելավումը.

10) զբոսաշրջության զարգացման այնպիսի համակարգի ստեղծումը, որը կնպաստի Հայաստանում կայուն, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ազգային եկամտի ավելացմանը, միջազգային կապերի զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների և Հայաստանի պատմամշակութային ժառանգության ու բնության պահպանությանը և արդյունավետ օգտագործմանը, զբոսաշրջիկների իրավունքների պաշտպանությանը:

## III. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Կոմիտեն՝

1) մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջության, դրա նյութատեխնիկական և սոցիալական բազայի զարգացման հեռանկարների և ուղղությունների վերաբերյալ.

2) համագործակցում է նախարարությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջային գործունեության

սուբյեկտների հետ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման, տեղեկատվական բազայի ձևավորման, զարգացման ծրագրերի մշակման և մարքեթինգի իրականացման ուղղություններում.

3) ապահովում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորումն ու ամրապնդումը.

4) համապատասխան նախարարին առաջարկություններ է ներկայացնում զբոսաշրջային տարածաշրջաններ, կենտրոններ, երթուղիներ և օբյեկտներ սահմանելու և դրանք Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման և տարածքային զարգացման ծրագրերում ներառելու վերաբերյալ.

5) աջակցում է զբոսաշրջության ոլորտում ազգային և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը.

6) տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ է ներկայացնում դրանց տարածքում գտնվող զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների և օբյեկտների վերանորոգման, բարեկարգման և պատշաճ վիճակում պահպանման վերաբերյալ.

7) աջակցում է զբոսաշրջության բնագավառում կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և նրանց որակավորման բարձրացմանը, զբոսաշրջության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը.

8) այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մասնակցում է զբոսաշրջության ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգերին.

9) մասնակցում է զբոսաշրջության ոլորտի ռազմավարության, զարգացման պետական ծրագրերի մշակմանը, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.

10) վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը (ռեգիստրը).

11) իրականացնում է զբոսաշրջության ոլորտի քաղաքականության մշակման համար անհրաժեշտ հետազոտություններ և վերլուծություններ.

12) մշակում և համապատասխան նախարարության միջոցով իրավասու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջության զարգացման հետ կապված նրանց իրավասությունների վերաբերյալ.

13) իրականացնում է սոցիալական փաթեթում ներառված հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների հաշվառման գործընթացը.

14) ներկայացնում է զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկություններ և ապահովում զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցությունը, ներկայացնում է զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը միջազգային համագործակցության շրջանակներում.

15) մշակում և իրականացնում է ներքին շուկայում ոլորտի կազմակերպությունների ու դրանց միությունների հետ համատեղ ծրագրեր.

16) համագործակցում է պետական և տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներում.

17) համակարգում է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող՝ զբոսաշրջությանն առնչվող աջակցության ծրագրերը կամ ծրագրերի այն մասերը, որոնք պարունակում են զբոսաշրջության բաղադրիչ, ինչպես նաև վերահսկում է դրանց կատարման ընթացքը.

18) նպաստում է զբոսաշրջային գործունեության վերաբերյալ տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը.

19) իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության ու հայկական զբոսաշրջային արդյունքի (այդ թվում՝ նաև

գովազդատեղեկատվական նյութերի միջոցով) պատշաճ ներկայացումը՝ խթանելով այն միջազգային միջոցառումներին (այդ թվում՝ մասնագիտացված ցուցահանդեսներին) մասնակցության, մամուլի, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային մարքեթինգի և հասարակության հետ կապերի այլ միջոցներով.

20) իրականացնում է մարքեթինգային (այդ թվում՝ արտաքին շուկաների) ուսումնասիրություններ, վերլուծություններ և շահագրգիռ կողմերին ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ.

21) իրականացնում և համակարգում է զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքները.

22) աջակցում և մասնակցում է գործարար միջավայրի, ներդրումների և զբոսաշրջության ոլորտը կարգավորող բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորմանն ու վարչարարական խոչընդոտների վերացման միջոցառումների մշակմանը.

23) մասնակցում է զբոսաշրջության, ներդրումային ծրագրերի մշակմանը և իրականացնում է դրանք.

24) մշակում և իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի Հանրապետության՝ որպես զբոսաշրջային երկրի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման և խթանման ծրագրեր.

25) ձևավորում և վարում է զբոսաշրջային տեղեկատվական բազան.

26) շահառուներին է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն.

27) համակարգում է պետական աջակցությամբ գործող զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները և ապահովում դրանց գործունեությունը.

28) սահմանված կարգով ներկայացնում է զբոսաշրջության օրենսդրական դաշտի կիրառման պրակտիկայի ընդհանրացման, դրա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.

29) ուսումնասիրում է զբոսաշրջային արդյունքի խթանման և իրականացման համաշխարհային առաջավոր փորձը, ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև իրականացնում է միջոցառումներ՝ դրանք Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար.

30) աջակցում է Հայաստանի Հանրապետության կողմից զբոսաշրջության ոլորտում կնքված պայմանագրերի և համաձայնագրերի իրականացմանը.

31) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

## IV. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

14. Կոմիտեի կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը (այսուհետ՝ նախարար):

15. Նախարարը՝

1) հաստատում է կոմիտեի, իսկ առկայության դեպքում՝ նաև գրասենյակի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է կոմիտեի գործունեության վերահսկողությունը.

4) լսում է կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

16. Կոմիտեն ղեկավարում է Կոմիտեի նախագահը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ նախարարի առաջարկությամբ:

17. Նախագահն ունի տեղակալ, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ նախագահի ներկայացմամբ:

18. Նախագահն ունի օգնականներ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

19. Նախագահն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

20. Նախագահն իրականացնում է կոմիտեին վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող վիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

21. Նախագահին անմիջական հաշվետու են նախագահի տեղակալը, գլխավոր քարտուղարը, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները, նախագահի օգնականները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

22. Նախագահը հաշվետու է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և նախարարին:

23. Կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը.

4) օրենքով կամ կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է մարմնի համապատասխան աշխատողներին, նրանց

նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի, գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն, ցուցումները, հանձնարարականները.

10) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

11) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր օգնականներին.

12) սահմանում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև.

13) իրականացնում է վերահսկողություն կոմիտեին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ.

14) հաստատում է կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները.

24. Նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է առաջին տեղակալը, իսկ առաջին տեղակալի պաշտոն նախատեսված չլինելու կամ առաջին տեղակալի բացակայության դեպքում կոմիտեում նախագահի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը, եթե օրենքներով այլ բան նախատեսված չէ:

25. Կոմիտեի հաստիքացուցակը նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

26. Նախագահի տեղակալը՝

1) համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, գրասենյակներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն և արդյունքների մասին տեղեկացնում նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է գլխավոր քարտուղարի, այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

6) համակարգում է իրեն հանձնարարված ոլորտներում կոմիտեի համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

7) իրեն հանձնարարված ոլորտներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար նախագահին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված ոլորտներում տիրող վիճակի մասին.

9) նախագահին և գլխավոր քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասությանը վերաբերող հարցերի մասին.

10) նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ գործառույթներ:

27. Նախագահի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում կարող է ունենալ օգնական:

28. Նախագահի տեղակալն իր օգնականի անմիջական ղեկավարն է: Նախագահի տեղակալի օգնականն անմիջական հաշվետու է նախագահի տեղակալին÷

29. Գլխավոր քարտուղարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է կոմիտեի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:

30. Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանն իր մեղքով պատճառած վնասի համար:

31. Գլխավոր քարտուղարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

32. Գլխավոր քարտուղարի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետությանը պատճառած վնասը հատուցում է սույն մասի պահանջը խախտած անձը:

33. Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով

34. Գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

4) նախագահին է ներկայացնում առաջարկություններ կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների և գրասենյակների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

5) նախագահին է ներկայացնում մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և գրասենյակների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն.

6) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է նախագահի տեղակալի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, գրասենյակներին, կազմակերպություն-ներին և հիմնարկներին փոխանցում է նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարա-րականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով նախագահին.

8) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր և (կամ) նախագահի և (կամ) նախագահի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

9) նախագահին ներկայացնում է առաջարկություններ կոմիտեի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

10) կազմակերպում է կոմիտեի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները.

11) կազմակերպում է կոմիտեում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

12) վերահսկում է սահմանված ժամկետներում կոմիտեի աշխատակազմի կողմից աշխատանքների կատարման ընթացքը.

13) նախագահի ստորագրությանն է ներկայացնում նախագահի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

14) կազմակերպում է կոմիտեի հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը.

15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

35. Գլխավոր քարտուղարի բացակայության դեպքում նրա փոխարինումն իրականացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## V. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

36. Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1. զբոսաշրջության քաղաքականության վարչություն.

2. միջազգային համագործակցության վարչություն.

3. մարքեթինգի և խթանման վարչություն.

37. Կոմիտեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ չունի:

38. Նախագահին վերապահված իրավասությունների իրականացման նպատակով աջակցող մասնագիտական ստորաբաժանումների (ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը, հաշվապահական հաշվառումը, գնումների կազմակերպումը, անձնակազմի կառավարումը, իրավաբանական և գործերի կառավարման) գործառույթներն իրականացվում են նախարարության միջոցով:

## VI. ԿՈՄԻՏԵԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

39. Կոմիտեի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

## VII. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

40. Կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

41. Կոմիտեի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

42. Կոմիտեին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

43. Կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

## VIII ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

44. Կոմիտեի ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

45. Կոմիտեի ֆինանսական գործառույթների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը:

---